ը/ ստեղծում և լուծարում է Կազմակերպության հիմնարկները, կառուցվածքային ստորաբաժանումները, առանձնացված ստորաբաժանումները /մասնաճյուղեր, ներկայացուցչություններ/, ինչպես նաև հաստատում է նրանց կանոնադրությունները.

թ/ հաստատում է Կազմակերպության աշխատակազմի հաստիքացուցակը, աշխատողների վարձատրության կարգն ու չափերը.

ժ/ սահմանում է Կազմակերպության ղեկավար մարմիններում ընդգրկված անձանց վարձատրության կարգը և չափը,

ժա/ հաստատում է Կազմակերպության հաշվապահական հաշվառման հաշվետվությունները.

ժբ/ իրավունք ունի քննարկել և լուծել Կազմակերպության գործունեությանն ու կառավարմանն առնչվող ցանկացած հարց, բացառությամբ Ժողովի բացառիկ իրավասությանը վերապահվածներից:

7.7 Խորհուրդը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե նրան մասնակցում են իր անդամների երկու երրորդից ավելին:

Խորհրդի որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ:

Ձայների հավասարության դեպքում նախագահի ձայնը վճռորոշ է:

7.8 Կազմակերպության նախագահն ընտրվում է Ժողովի կողմից 2 տարի ժամանակով:

7.9 Կազմակերպության նախագահը՝

- ղեկավարում Խորհրդի աշխատանքները և վարում է նրա նիստերը.
- ներկայացնում է Կազմակերպությունն առանց լիազորագրի.
- արձակում է հրամաններ, տալիս է լիազորագրեր.
- օրենքով սահմանված կարգով կնքում է գործարքներ, ստորագրում է պայմանագրեր, ֆինանսական փաստաթղթեր, բացում բանկային հաշիվներ.
- Խորհրդի հաստատմանն է ներկայացնում աշխատակազմի հաստիքացուցակը:
- ձեռք է բերում, տիրապետում, օգտագործում, տնօրինում, օտարում և դուրս գրում Կազմակերպության՝ մինչև մեկ միլիոն դրամ արժողության գույքը:

Կազմակերպության փոխնախագահն ընտրվում է ժողովի կողմից 2 տարի ժամանակով և փոխարինում է կազմակերպության նախագահին վերջինիս բացակայության ժամանակ:

7.10 Կազմակերպության վերահսկիչ հանձնաժողովը (վերահսկիչը) ընտրվում է Ժողովի կողմից 2 տարի ժամանակով: Խորհրդի անդամները և Կազմակերպության նախագահը չի կարող լինել Վերահսկիչ հանձնաժողովի անդամներ:

7.11 Վերահսկիչ հանձնաժողովն իր աշխատանքներն իրականացնում է նիստերի ձևով, որոնք հրավիրվում են տարեկան առնվազն 2 անգամ: Նիստ կարող է հրավիրվել նաև Կազմակերպության անդամների 20%-ի, հանձնաժողովի անդամների մեկ երրորդի, Կազմակերպության նախագահի կամ Խորհրդի պահանջով:

7.12 Կազմակերպության վերահսկիչ հանձնաժողովը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե նիստին մասնակցում են հանձնաժողովի անդամների 2/3-ը: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է: Եթե վերահսկող մարմինը վերահսկիչն է, ապա նա որոշումներ է ընդունում միանձնյա:

7.13Վերահսկիչ հանձնաժողովը կարող է Կազմակերպության նախագահից և այլ աշխատողներից պահանջել Կազմակերպության գործունեությանն առնչվող ցանկացած տվյալներ և հաշվետվություն:

7.14Վերահսկիչ հանձնաժողովը պարտավոր է հաշվետվություն ներկայացնել Ժողովին՝ Կազմակերպության գործունեության, հաշվեկշռի, գույքի պահպանման և այլ ամփոփ տվյալների ստուգման արդյունքների մասին:

8.ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԳՈՅԱՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

8.1Կազմակերպության գույքը հանդիսանում է Կազմակերպության սեփականությունը:

8.2Կազմակերպությունը որպես սեփականություն կարող է ունենալ անշարժ գույք, տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ, դրամական միջոցներ, արժեթղթեր և օրենքով չարգելված այլ գույք: Կազմակերպության անդամը նրա սեփականության նկատմամբ բաժնային իրավունք չունի:

8.3Կազմակերպության սեփականության գոյացման աղբյուրներ կարող են լինել՝

- Կազմակերպության անդամների մուտքի վճարները, անդամավճարները, դրամական և նյութական ներդրումները,